ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

«ԿՈՏԱՅՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ

Հաստատում եմ՝ _____ Ռ. Մարտիրոսյան

Կոտայքի տարածաշրջանային

պետական քոլեջի կառավարման

խորհրդի նախագահ

«20» _____08_____ 2020 թվական

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

(ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ)

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ, ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ

ՀՐԱԶԴԱՆ 2020

1. ՍՈՎՈՐՈՂԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Գնահատումն անհատի գիտելիքների ընկալումը, կարողությունների և հմտությունների ձեռքբերումը հավաստող գործընթաց է:

Գնահատման նպատակն է հաստատել գնահատման չափանիշները՝ օբյեկտիվության, մատչելիության, արդյունավետության, չափելիության, թափանցիկության սկզբունքների հիման վրա:

1. Գիտելիքների գնահատման կանոնակարգի նպատակն է բացահայտել մոդուլների (առարկաների) դասավանդման ընթացքում ուսումնառողի ստացած գիտելիքների, կարողությունների և հմտությունների վերջնարդյունքների որակական ձևավորումը:
2. Գնահատման միջոցով հավաստել, որ անհատը ձեռք է բերել որոշակի գիտելիք, հմտություն և կարողություն, ինչի համար նրան կարող է շնորհվել վկայական կամ դիպլոմ:
3. Սույն կանոնակարգում փոփոխություններն ու լրացումները հաստատվում են նույն կարգով:

2. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԿՏՊՔ-ում գնահատումն իրականացվում է ուսումնառության ընթացքում (ընթացիկ), կիսամյակի և ուսումնական տարվա ավարտին (ամփոփիչ) և ուսումնառության ավարտին (ամփոփիչ ավարտական ատեստավորում):

Ընթացիկ և ամփոփիչ գնահատումներն իրականացվում են դասախոսի կամ ուսումնական հաստատության կողմից՝ ըստ ուսումնական մոդուլների (առարկաների), և գրանցվում են դասամատյանում ,այնուհետև քննական ամփոփագրում:

Ստուգարքային և քննական ամփոփագրերը կազմվում են ուսումնական մասում, վավերացվում են տնօրենի և ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենի կողմից և կնքվում հաստատության կնիքով: Ստուգարքային և քննական ամփոփագրերը տրամադրվում են դասախոսական կազմին ստուգարքի կամ քննության սկսվելուց անմիջապես առաջ և վերադարձվում են ուսումնական մաս ստուգարքի կամ քննության ավարտից անմիջապես հետո:

Գնահատումն իրականացվում է քանակական (միավորային) և որակական (ուսուցանող) ձևերով:

Մոդուլների գնահատման արդյունքում ընդունվում է վերջնական որոշում. «անցել է» կամ «չի անցել», թեև գնահատման գործընթացների շրջանակներում ուսանողների կատարած աշխատանքը կարող է ստանալ որոշակի միավորներ՝ ըստ նախապես սահմանված սանդղակի:

Ստուգարքին կամ քննությանը ուսանողը պարտավոր է ներկայանալ ստուգման գրքույկով, և տվյալ դասընթացի դասախոսը պատասխանատվություն է կրում ստուգման գրքույկի և ստուգարքի կամ քննական ամփոփագրի գրանցման համապատասխանության համար:

Կիրառվում են գնահատման հետևյալ ձևերը.

ԿՏՊՔ-ում կիրառվում են գնահատման տարբեր ձևեր, որոնք բերվում են 10 միավորանոց համակարգի:

Միավոր	Անվանում
10	«բացառիկ»
9	«գերազանց»
8	«շատ լավ»
7	«լավ»
6	«միջինից բարձր»
5	«միջին»
4	«բավարար»
3	«անբավարար»
2	«վատ»
1	«շատ վատ»

Գնահատման հիմքում դրվում են սովորողի անհատապես և խմբով կատարած աշխատանքների արդյունքները (այդ թվում՝ ինքնաստուգումներ, ընթացիկ և կիսամյակային ամփոփիչ ստուգումներ, հետազոտական-ստեղծագործական աշխատանքը, ուսումնա-հասարակական նախագծեր, ուսումնական ճամփորդություններ, հայրենագիտական արշավներ, ստեղծագործական ստուգատեսներին, օլիմպիադաներին, այդ թվում՝ մեդիա, ցուցահանդեսներին, փառատոներին մասնակցություն): Սովորողի ստեղծած այլ տեսակի արդյունքները սահմանված կարգով ներկայացվում են ցուցադրություններում, ցուցահանդեսներում, ստեղծագործական հավաքներում:

Ընթացիկ ստուգման ժամանակ դասախոսը դիտարկում է գործնական պարապմունքներին ուսանողի պատրաստվածության մակարդակը, ուսանողի կատարած

ինքնուրույն աշխատանքը, ուսումնական նյութի յուրացման աստիճանը, լսարանային աշխատանքներին մասնակցության մակարդակը:

Ստուգումների անցկացման նպատմամբ հսկողությունն իրականացնում է ուսումնական մասը և համապատասխան ամբիոնը:

Եթե ուսումնական պլանով նախատեսված է հանրագումարային ստուգում իրականացնել քննության միջոցով, ապա վերջինիս համար մշակվում է հարցաշար, որն ընդգրկում է ամբողջ դասընթացը, հարցատոմսեր՝ համաձայն հարցաշարում ընդգրկված քննական հարցերի և ուսանողների թվաքանակի, վավերացվում են համապատասխան ամբիոնի վարիչի, ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենի կողմից և պահվում են ամբիոններում:

Գիտելիքների գնահատումը (ստուգումը) ներառում է հետևյալ բաղադրիչները.

ա) մոդուլի (առարկաների) արդյունքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում

բ) ամբողջ մոդուլի (առարկայի) եզրափակիչ գնահատում, ինչը ենթադրում է մոդուլի (առարկայի) համար սահմանված վերջնարդյունքների ձեռքբերման մակարդակի գնահատում:

Եթե ուսանողները կարողանում են բավարարել որակավորման չափորոշչով սահմանված պահանջներին, նրանք ստանում են համապատասխան որակավորում: Եթե նրանք չեն բավարարում վերոնշյալ պահանջները կամ մասամբ են բավարարում դրանք, նրանք պետք է զարգացնեն իրենց հմտություններն ու կարողությունները, որից հետո դիմեն կրկնակի գնահատման:

Եզրափակիչ գնահատումն իրականացվում է դասընթացի (մոդուլի, ինչպես նաև կրթական ծրագրի) ավարտին՝ ամփոփիչ քննությունների և ավարտական աշխատանքների ստուգման ու գնահատման միջոցով:

Ընթացիկ և ամփոփիչ գնահատման արդյունքների մասին ուսումնական հաստատությունը պարբերաբար տեղեկացնում է սովորողի ծնողին:

Ընթացիկ և եզրափակիչ գնահատման կազմակերպումը

Ընթացիկ և եզրափակիչ քննությունների ժամանակացույցերը կազմվում են ուսումնական մասի կողմից և հաստատվում տնօրենի կողմից:

Ընթացիկ և եզրափակիչ քննությունների /ստուգարք/ ենթակա ուսումնական նյութի բովանդակությունը, քննությունների ձևերը, հարցաշարերը տրամադրվում են ուսանողներին, ինչպես նաև տեղեկացվում է գնահատման մեթոդների և չափանիշների մասին (կիսամյակի առաջին 2 շաբաթվա ընթացքում):

Բոլոր գրավոր քննությունները (ստուգողական աշխատանքները) կատարվում են շտամպած տետրում, իսկ մոդուլների արդյունքների ամփոփումները՝ դասախոսի կողմից տրված գնահատման թերթիկներում կամ որոշ մոդուլների արդյունքների գնահատման դեպքում՝ տետրերում:

3. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ԿՏՊՔ-ում ուսանողների գիտելիքների ստուգումն իրականացվում է կամ դասավանդող դասախոսի կամ հանձնաժողովի կողմից: Գիտելիքների ստուգման համար նախատեսված են որոշակի չափանիշներ:

- *Ոչ քննական /ստուգարքային/ առարկաներից գիտելիքները գնահատվում են ընթացիկ գնահատականների հիման վրա հօգուտ ուսանողի «ստուգված/չստուգված» համակարգով:*
- *Քննական առարկաների համար նախատեսվում է քննություն, որն անցկացվում է գրավոր կամ բանավոր:*
- *Մոդուլների արդյունքների կատարման համար հիմք է հանդիսանում մոդուլային ծրագրերում ներառված գնահատման կարգը:*
- *Արդյունքների միջանկյալ ստուգմանը չմասնակցած ուսանողներին արդյունքը հանձնելու համար տրվում է ժամանակ:*
- *Մեկ առարկայից չառաջադիմող կամ հարգելի բացակայություն ունեցող ուսանողների համար կազմակերպվում է բաց դռների օր քննաշրջանից անմիջապես հետո՝ ըստ ժամանակացույցի:*
- *Երկու և ավելի անբավարար գնահատական ունեցող ուսանողների համար կազմակերպվում է պարտքերի մարման քննաշրջան՝ յուրաքանչյուր կիսամյակի առաջին 2 շաբաթվա ընթացքում:*
- *Առարկայական պարտքեր ունեցող ուսանողները թույլատրվում են մասնակցելու քննաշրջանին (բացառությամբ ֆիզիկական կուլտուրան):*

- Ֆիզիկական կուլտուրա առարկան չհանձնած ուսանողը պարտավոր է մարել այդ պարտքը մինչև հաջորդ կիսամյակի քննաշրջանի սկիզբը, որից հետո միայն նրան թույլատրվում է մասնակցելու այդ քննաշրջանին:
- Եթե ուսանողը չի մասնակցել պրակտիկային և չի առաջադիմել, ստանում է անբավարար գնահատական, որը վերահանձնման ենթակա չէ:
- Յուրաքանչյուր առարկան թույլատրվում է հանձնել ոչ ավել, քան երեք անգամ (քննաշրջանի և պարտքերի մարման փուլ):
- Կիսամյակում գերազանցիկ է համարվում այն ուսանողը, ով տվյալ կիսամյակում բոլոր մոդուլներից (առարկաներից) հավաքել է գերազանց գնահատական:
- Գերազանցության դիպլոմը շնորհվում է այն ուսանողներին, որոնց բոլոր մոդուլների (առարկաների) ամփոփիչ գնահատականները համապատասխանում են «լավ» և «գերազանց» գնահատականներին, ընդ որում՝ «լավ» գնահատականների քանակը չի գերազանցում 25 տոկոսը և պրակտիկաներից, պետական ավարտական քննություններից և ավարտական դիպլոմային աշխատանքի պաշտպանությունից հավաքել են գերազանց գնահատական:
- Եթե ուսանողին պակասում է մեկ գնահատական գերազանցության դիպլոմի հավակնորդ լինելու համար, ապա նրան թույլատրվում է նախավերջին կիսամյակի պարտքերի վերահանձնման ժամանակաշրջանում վերահանձնել ուսումնական պլանով նախատեսված մեկ առարկա:

4. ՊԵՏԱԿԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

ԿՏՊՔ-ում ամփոփիչ ատեստավորումն անցկացվում է համաձայն ‹‹ՀՀ նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման կարգը հաստատելու մասին›› ՀՀ կրթության և գիտության նախարարի 2006 թ. հուլիսի 21-ի N 638-Ն հրամանի:

Պետական ամփոփիչ ատեստավորման նպատակն է գնահատել սովորողի համապատասխանության աստիճանը տվյալ մասնագիտության՝ չափորոշչով սահմանված պահանջներին:

Պետական ամփոփիչ ատեստավորումն իրականացվում է ուսումնական մոդուլների համալիր քննության կամ դիպլոմային նախագծերի արդյունքում: Պետական ամփոփիչ ատեստավորման արդյունքները գրանցվում են ավարտական փաստաթղթում:

Պետական ամփոփիչ ատեստավորման գնահատականները ենթակա են բողոքարկման դրանք հայտարարելուց անմիջապես հետո, որի համար կազմվում է առանձին արձանագրություն:

5. ՈՒՍԱՆՈՂԻ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Ակադեմիական տեղեկագիրն օգտագործվում է ուսանողի ուսումնական գործունեությունը և առաջադիմությունն ուսման որոշակի կամ ողջ շրջանի ընթացքում վավերագրելու համար՝ ուսումնասիրած դասընթացների և կրթական մոդուլների, ստացած գնահատականների գրանցման միջոցով: Այն արտացոլում է ուսանողի կատարած ուսումնական աշխատանքի ծավալը և կրթական ձեռքբերումների որակը:

ԿՏՊՔ-ն յուրաքանչյուր ուսանողի համար նրա ընդունման պահից սկսած վարում է ակադեմիական տեղեկագիր, որտեղ յուրաքանչյուր քննաշրջանից հետո գրանցվում են ուսանողի ստացած գնահատականներ՝ ըստ առարկաների, մոդուլների և կիսամյակների:

Ուսանողի ուսման առաջադիմության ընդհանրացված արդյունքները ներկայացնելու համար ակադեմիական տեղեկագրում կիսամյակային արդյունքներից հետո նշվում են տվյալ կիսամյակի և մինչև ուսման տվյալ ժամանակահատվածը ուսանողի առաջադիմությունը ամբողջացնող ամփոփիչ տվյալները, որոնք ներառում են՝

- Թվանշային գնահատականները.
- Ստուգարքները՝ ‹‹ստուգված է›› համակարգով:

6. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ, ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

Բողոքարկման կարգը ուղղված է ուսանողի կողմից ցուցաբերած գիտելիքի գնահատման (գնահատականի) վերանայմանը:

Ուսանողը պետք է գիտակցի ստացած գիտելիքի գնահատման անհրաժեշտությունը, որն ուղղված է նրա կողմից ձեռք բերած ունակությունները բացահայտելուն:

Դասավանդողը պարտավոր է ուսանողին տեղեկացնել և ծանոթացնել դասընթացին ուղղված գնահատման համակարգին և դրա բաղադրիչներին, օբյեկտիվ գնահատել ուսանողին՝ ըստ նրա կողմից ցուցաբերած գիտելիքների, կարողությունների ու հմտությունների և ապահովել ուսանողին անհրաժեշտ տեղեկատվությամբ:

Քննող դասախոսը կամ քննական հանձնաժողովը պարտավոր է ուսանողների գիտելիքների գնահատումը կազմակերպել և իրականացնել օբյեկտիվ և թափանցիկ ձևով:

Ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման համար հաստատությունում սահմանվում են քննությունների գրավոր և բանավոր ձևեր:

Ուսանողը պետք է հստակ տեղեկացված լինի գնահատմանը ուղղված իր իրավունքներին և պարտականություններին.

Ուսանողը գնահատվում է ըստ մոդուլի (առարկայի) համար սահմանված գործոնների, որոնցից են՝ ակտիվություն դասերին, կատարած անհատական և ինքնուրույն աշխատանքների կատարողականը, միջանկյալ հարցումները, յուրաքանչյուր արդյունքի գնահատումը, ստուգարքները և քննությունները:

Ուսանողի կողմից գրագողության փորձ անելու դեպքում չեղյալ են համարվում քննական տեստրում կատարած գրառումները:

Վերջնական գնահատականի հիմքն են հանդիսանում բոլոր բաղադրիչներով հավաքված միավորները:

Ուսանողը, իր գնահատականից բավարարված չլինելու դեպքում, իրավունք ունի այն բողոքարկելու:

ՈՒսանողը բողոքարկման իրավունք ունի՝

1. Եթե գնահատումը ոչ օբյեկտիվ է, եթե դասավանդողի կողմից կատարվել է գնահատման անհստակություն, գնահատողը չունի բավարար փորձ և հմտություն ուսանողին գնահատելու համար:
2. Գնահատականով չբավարարված ուսանողը կարող է դիմել ուսումնական մաս ՝ նրա գիտելիքները հավելյալ գնահատելու խնդրանքով:
3. Գրավոր քննության դեպքում՝ յուրաքանչյուր ուսանող բողոքարկումը պետք է անձամբ ներկայացնի գրավոր տեսքով ոչ ուշ, քան գնահատականը հայտարարելուց մեկ օր հետո:

4. Բանավոր քննության դեպքում՝ յուրաքանչյուր ուսանող, առանց լսարանից հեռան իրավունք ունի խնդրել քննասենյակ հրավիրել ուսումնական մասի աշխատակցին պատասխանատուին) և տվյալ ամբիոնի վարիչին՝ գնահատման վերաբ բողոքարկում ներկայացնելու համար:
5. Բողոքարկման դեպքում տնօրենի կողմից ստեղծվում է բողոքարկման հանձնաժ Այն նորից ստուգում է ուսանողի աշխատանքը և լսում ուսանողի կողմից առարկ վերաբերող թեմաների ներկայացումը:
6. Բողոքարկումը և գնահատումը հանձնաժողովի կողմից պետք է լինեն օբյեկտի թափանցիկ: Արդյունքում գնահատականը կարող է ինչպես բարձրացվել, այնպե իջեցվել կամ թողնել առանց փոփոխության:
7. Հանձնաժողովի կողմից նշանակված գնահատականը վերջնական է: Այն նշա-նակ է առանձին ուղեգրի մեջ և կցվում ընդհանուր քննական թերթին, հավելյալ նշո կատարվում ստուգման գրքույկում: Կազմվում է բողոքարկման հանձնաժող արձանագրություն:
8. Բողոքարկումը չեղյալ է համարվում եթե՝
   - Այն հակասում է «ԿՏՊՔ-ի ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատ և բողոքարկման կանոնակարգին».
   - Ուսանողի կողմից ներկայացվում է չհիմնավորված պատճառաբանություն առողջական վիճակի վերաբերյալ:

Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի տնօրենի պարտականությունները կատարող՝ Վ. Թովմասյան